«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ *(Պ-884-02.03.2021-ՏՀ-011/0)* ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկում է՝

I. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ՝

1. Նախագծում սահմանված չէ «ելակետային տվյալներ» բառակապակցության սահմանումը կամ տերմինը: Առաջարկում ենք այն սահմանել այնպիսի խմբագրությամբ, որ բավարարի նախագծի ընդունման հիմնավորմամբ ներկայացված նպատակին:

2. Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունը «և կառուցապատողի համար միացման համար անհրաժեշտ աշխատանքները նվազագույն ծախսերով իրականացնելու պայմաններից» բառերից հետո լրացնել «, չապահովելու պարագայում՝ տրամադրելով հստակ հիմնավորումներ:» բառերով:

3. Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ կետով ներկայացվում է համայնքի կողմից տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու կարգի վերաբերյալ հղումը ՀՀ կառավարության որոշմանը, որում սահմանվում են նաև տեխնիկական պայմանների տրամադրման ընթացակարգն ու ժամկետները: Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետը վերանայել, քանի որ ճարտարապետահատակագծային առաջադրանքն ու տեխնիկական պայմանները կիրառելի են միայն միասնական ձևաչափով:

II. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ՝

Նախագծի վերաբերյալ սկզբունքորեն առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք հոդվածները խմբագրել, քանի որ՝

1. $157^2$–րդ հոդվածով հստակեցված չէ ինժեներական սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից ընթացակարգերի և ժամկետների խախտման համար համայնքի պաշտոնատար անձի նախազգուշացվելու կամ տուգանքի ենթարկվելու պատճառը: Առաջարկում ենք սահմանել այնպիսի կարգավորում, որպեսզի համայնքը (համայնքի ղեկավարը) չտուգանվի մատակարար կազմակերպության պատճառով:

2. $157^3$–րդ հոդվածով հստակեցված չէ «բարենպաստ պայմաններում» բառակապակցությունը: